

347 6

7-16

14658

# ԵՌԻԱՆԷՄԳՈՒԻ

ԿՏԱԿԻ ԽՆԴՐՈՅՆ ԱՌԹԻԻ

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆ

ՅԱԿՈՐ ՊԱՀՐԻԻ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱՏՈՒՑԵԱԼ

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

11 ՆՈՅԵՄԲԵՐ 1911 ՆԻՍՏԻ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռ. ՍԱԳԱՆԱՆ

Կ. ՊԱԼԻՍ

Ե. Ք.

347-6

9-16

# ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պ. Ա. ԵՌԱՆԵՍԻԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՐԴԻՆ ԵՒ ՍԶԳ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՄԻՋԵՒ ԿՆՔՈՒԱԾ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ ՆԱՅՈՑ

Կոստանդնուպոլիս

Համար 245

Հանգուցեալ Ռուսահայտուկ Պ. Անդրանիկ Եռանէսքու ի կենդանութեան կատարեալէս անողջ մտօք և գիտակցութեամբ պատրաստած էր կտակագիր մը, 1905 (հազար ինն հարիւր հինգ) Յունիս մէկին Քիչնէվի մէջ, տեղւոյն Նօտարներէն Քարլ Վիլհելմովիչի ձեռամբ արձանագրուած և վաւերացուած:

Այս կտակագրով հանգուցեալը ինչ որ իր շարժական սեփականութիւնը կ'երեւայ՝ ամբողջովին թողած էր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին, որպէս զի այդ ստացուածքին տարեկան արդիւնքը գործածուի ի նպաստ Հայ որբերու, և կտակակատար կարգած էր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը:

Հանգուցելոյն մահէն ետքը՝ որ տեղի ունեցաւ 1907 Փետրուար 28ին (հազար ինը հարիւր եօթը Փետրուար քսան և ութ) ի Փարիզ, Պատրիարքարանի դիմումին վրայ՝ Քիչնէվի դատարանը պաշտօնապէս հաստատեց վերոյիշեալ կտակագիրը, 1907 Ապրիլ 17ին (հազար ինը հարիւր եօթը Ապրիլ տասն և եօթը):

Հանգուցելոյն քոյրը Տիկին Աննա Եռանէսքու իրր Ռումանական հպատակ ասկէ առաջ դիմած էր Կ. Պոլսոյ Ռումանական Հիւպատոսարանին յայտնելով թէ ինք է հանգուցելոյն միակ ժառանգորդը և կը բողոքէ վերոյիշեալ կտակագրին դէմ, և յիշեալ Տիկինոջ այս բողոքը գրաւորապէս հաղորդուած էր Ռումանիոյ Հիւպատոսարանին կողմէ Փարիզի Ռուսական Հիւպատոսարանի և Քրէտի Լիօնէ դրամատան:

Մէկ կողմէ այս դիմումը ընկելով հանդերձ՝ միւս կողմէ յիշեալ Տիկինը յատուկ զրով ինդրած էր Ազգ. Վարչութիւնէն որ նկատողութեան առնուելով իր նիւթական վիճակը իրեն յատկացուի հարիւրին յիսունն հանգուցելոյն թողած հարստութիւնէն յայտարարելով թէ ինք պատրաստ է կտակին գործադրութեան դէմ յարուցած բոլոր առարկութիւններէն հրաժարիլ:

Հանգուցելոյն քրոջը այս խնդրագիրը խառն ժողովոյ մէջ նկատողութեան առնուելով յետ խորհրդակցութեան որոշուեցաւ Պ. Եռանէսքուի թողած ստացուածքէն զանազան սուրքերը նօտարական և փաստարանական վարձքերը, դատական ծախքերը, յուղարկաւորութեան և գերեզմանի և շիրիմի համար վճարուած ու վճարուրիք գումարները և հանգուցելոյն թողած ձեռագիր Բառարանին հրատարակութեան յատկացուելիք սպազրական և այլ բոլոր ծախքերը զեղչուելէն ետք մնացած գումարներուն հարիւրին քսան և հինգը Պատրիարքարանի կողմէ վճարուի իրեն:

Յիշեալ Տիկինը խառն ժողովոյ այս որոշումը ամբողջապէս ընդունած ըլլալով՝ բացարձակապէս և պաշտօնապէս ետ կեցած է կտակագրին դէմ որ և է առարկութիւններէ և բողոքներէ, նոյնպէս վերոյիշեալ քսան և հինգ առ հարիւր գումարէն աւելի որ և է պահանջումէ և գատէ գերծ կացուցած է կտակատար և Միւթէվէլի Պատրիարքը, խորա և խաբիւ ընկելով, նաև յանձն առած է գրաւորապէս հաղորդել առ որ անկ է թէ այս մասին հրաժարած է և կը հրաժարի որ և է բողոքէ և առարկութիւնէ, և յանձնած է պատշաճ պաշտօնագիրը:

Կ. Պոլիս 30 Նոյեմբեր 1907


Կնիք Պատրիարքարանի

Պ. Կ. Պ. ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊԵԱՅ

78252-ակ  
1415-87

2001

2010



Պ. Ա. ԵՈՒԱՆԵՍԿՈՒԻ ժառանգորդներու եւ պատրիարքարանի միջեւ գոյացած այս համաձայնութենէն ետք ժառանգորդ Տիկին ԱՆՆԱ ԵՈՒԱՆԵՍԿՈՒԻ ստորագրութեամբ եւ Ազգ. Պատրիարքարան յանձնուած անդորրագիրներէն մէկը եղող Բարիզի Գրէսի Լիօնէին քով գտնուած 158000 Ֆրանկ գրամին արգելք վերցնելու համար Գրէսի Լիօնէի ուղղուած գրութեան պատճենն է .

30/12 Dec. 1907

*Credit Lyonnais*

Paris

MESSIEURS

Je vous avais avisé que j'étais l'unique héritière du M. Andronik Ioanescu, mon frère, décédé à Paris, et vous avais prié de bien vouloir m'opposer sur tous comptes du défunt dans votre établissement.

Vu l'existence d'un testament au profit des orphelins de la communauté Arménienne, dont mon frère avait choisi comme légateur universel, le Patriarcat Arménien Grégorien de Constantinople, nous avons conclu un arrangement avec ledit Patriarcat et je viens vous déclarer par la présente de lever l'opposition que vous avez dû mettre sur le dépôt de M. Andronik Ioanescu chez vous, et je vous autorise de tenir tous ses dépôts entre autres, les frs. 158,000 environs du capital de rente française, à la disposition du patriarcat Armenien Grégorien de Constantinople, qui seul a droit de vous donner pleine et entière décharge de toute réclamation généralement quelconques du chef de la succession de feu mon frère.

Veillez, sgréer, Messieurs, mes civilités empressées.

M<sup>me</sup> Anna Ioanescu.



Կ. Պոլիս 4 Նոյեմբեր 1911

Ազնուաշոյ՝ Տեառք Երեսփոխանի,

Եւանջելոսի խնդրին ամէն մանրամասնութեանց մօտէն տեղեակ ըլլալով, հարկ կը համարիմ ժողովիդ առջև քանի մը բացատրութիւններ առնելու որպէս զի Ազգ. Պատկ. Ժողովը լուսաբանուելով՝ միանգամ ընդ միշտ և անաջատօրէն տայ իր որոշումը :

Եւանջելոսի խնդիրը պէտք է երեք մասի բաժնել .

Ա. — Պատրիարքարանի և ժառանգորդներու մէջ ստորագրուած պայմանագրութեան խնդիրը :

Բ. — Հանգուցեալին ձգած երկասիրութեան համար Գարահան վարչութեան և Պատմաճեանի խնդիրը :

Գ. — Եւանջելոսի կտակէն որբերուն յատկացուած գրամին՝ իր նպատակին յատկացուելու խնդիրը :

Ա. — ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՈՒ ԽՆԴԻՐ

Սկսինք առաջին խնդրէն :

Ես Եւանջելոսի ժառանգորդներուն փոխանորդութիւնը ստանձնեցի իբր 5 տարի առաջ, իրենց խնդրանքով, երբ չունէի ո՛ր և է Ազգ. Պաշտօն : Խնդիրը քննելով և հանգուցեալին վերջին նամակը կարդալով, նախ տեսայ թէ հանգուցեալին ամենավերջին կամքն է իր ժառանգորդներուն տալական տալանովել, և յետոյ հանգուցեալը ընկել Ռումանացի ըլլալուն, և կտակը իբր Ռումանացիական պատրաստուած ըլլալուն, ինչպէս նաև ուրիշ օրինական պատճառներով, կտակը բեկանելու հաւանականութիւններ կան . հետեւաբար, որպէս զի օտար փաստաբաններու միջամտութեամբ գործը ի վնաս ազգին չվերջանայ՝ ժառանգորդներուն փոխանորդութիւնը ստանձնեցի պայման դնելով որ կտակը բեկանելու կողմը չերթան, այլ

հանգուցեալին վերջին կամքը արտայայտող նամակը հիմ բռնելով՝ համաձայնութեան գտն Ազգ. Պատրիարքարանի հետ և խնդիրը հաշտութեամբ կարգադրեն : Ասոր ապացոյցն է Տիկին Աննայի ստորագրութեամբ և 17/30 Փետր. 1907 թուակիր օրուան Պատրիարքին ուղղուած առաջին խնդրագիրը, ուր, ի մէջ այլոց, ըսուած է .

«Ես որ հանգուցեալին օրինաւոր կամքը «կատարելու ջեմ փափաք ունիմ, եթէ «ունեցած ԿՏԱԿԸ ՎԱԽԵՐԱԿԱՆ ԻՍԿ ԶԸԼԷ-«ԼԱՅ, հանգուցեալին ձգած հարսութեան «մէկ երբորդը իր կամքին համաձայն ազ-«գիւ որբերուն յատկացուիլը պիտի ընդու-«նիմ . իսկ միւս կողմէ Ազգ. Կեդրոնական «վարչութենէն կը խնդրեմ որ, եթէ կտակը «վերջին կամքը կատարելապէս յարգած «ըլլալու, իր ծերուկ տոյրը, որբեայրի քե-«տորին եւ որբ բոռնիկը խեղճ չի ձգելու «համար (վերջին նամակը նկատի առնելով) «ընդունելի կարգադրութիւն մը բնէ, որ-«պէս զի հարկ չի մնայ օտար դատարան-«ներու միջամտութեան եւ անպէտ ծախսերու» :

Կը տեսնուի որ գործին փոխանորդութիւնը ստանձնելուս իբր առաջին արդիւնք յաջողած եմ ժառանգորդներէն խոստում և ստորագրութիւն առնել թէ ժառանգութեան 1/3ը ազգ. որբերու պիտի յատկացուի, նոյն իսկ այն պարագային երբ կտակն անվաւեր ըլլայ : Այնպիսի չըջանի մը մէջ ուր կտակային բոլոր խնդիրներն, ինչպէս նաև ազգային դատին ազգին համար միշտ աննպաստ վերջաւորութիւն կ'ունենային, կարծեմ իմ վերոյիշեալ յաջողութիւնը կարելի է ազգին մաստցուած ծառայութիւն մը նկատել :

Հակառակ Ռումանացի մէջ հանգուցեալին թողած ստուար հարստութեան, միայն հանգուցեալին Բարիզի բնակարանը և Բարիզի Գրէսի Լիօնէն գտնուող 158,000 Փր. Ռումանական հիւպատոսարանի և արտաքին գործոց նախարարութեան միջոցաւ արգելքի տակ առնել տուի, որովհետեւ հաւանաբար չեմ տեսնուի ինչ Բարիզի այդ

զրամը ձեռք անցընելու, արդէն հանգուցեալին գաղտնայից և անսկիզբ մահը, և մահուան օրը թղթապանակին՝ բոլոր մուրհակներով՝ գողցուիլը ժառանգորդներուն բաւական կտակած կը ներշնչէին Բարիլի եղելութեանց մասին, վերջէն, Գրէտի Լիօնէէ՝ Եռանդեքուի վարձած արկղը բացուելուն, բոլորովին պարապ գլուխովին ալ, մեր այս կտակածը կատարելապէս արդարացուց: Եթէ ուզէինք, չառ դիւրին էր ոչ միայն հանգուցեալին Ռուսիոյ մէջ ունեցած ամբողջ հարստութիւնը արգելքի տակ առնել, այլ և Ռուսական օրէնքին համեմատ կտակողին մահուանէն 6 ամիս յետոյ՝ կտակին կառավարութենէն վաւերացուելուն ալ հակառակիլ: Դիտելի է մասնաւորապէս որ այս մասին Ռուսիայէ ձրի փաստաբաններ առաջարկուեցան, և մանաւանդ հանգուցեալին գլխաւոր պարտատէր Գարալտիլի՝ որ 60,000 ռուպլի պարտք ունի, իր փաստաբաններուն միջոցաւ առաջարկեց ժառանգորդներուն խնդիրը հաշտութեամբ կարգադրել, բայց մերժեցինք: Ահա վաւերացուցիլը:

«7/20 մարտ 907, Պօղոս Փափազեան ստորագրութեամբ՝ Բիշնէվէն Տիկին Աննա Եռանդեքուի ուղղուած նամակէն. «Ինչպէս գրած էի Ձեզ, փաստաբանը Ձեզմէ «ՉՈՒՋԵՐ ՈՉ ՄԻ ՍՏԱԿ մինչեւ որ չի վստահի Ձեր իրաւունքը. դուք պէտք է վստահ լինիք իրեն վրայ: Փաստաբանը «կ'ըսէ քե Տիկին Եռանդեքուի գալը անպատճառ պէտք է:»

16/29 մարտ 907 թուակիր, Պօղոս Գարալտիլի փաստաբան Իվանօֆի կողմէ Տիկին Էնֆիլէճեանի ուղղուած նամակէն.

«Պարոն Տիմիքի Գարալտիլի Ձեր «ասրէսը տուա ինձի, խնդրելով որ պէտք «եղած ծառայութիւնը մատուցանեմ Ձեզի՝ «ժառանգութեան խնդրին մէջ: ՄԻՆՉԵՒ ՈՐ ԿՏԱԿԱԳԻՐԸ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԻ ԵՒ ՎԱԻԵՐԱՅՈՒԻ, ԴՈՒՔ ԻՆՔ. «ՁԻՆՔԻՆԻ ԻՐ ԺԱՌԱՆԳՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՆ ԿՐԱՆՔ ՅԱՂՈՂԻ ԶԱՆ. «ԳՈՒՅԵԱԼԻՆ ՊԱՆԱՆՁՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ:

«Միայն Գարալտիլին 40,000 ռուպլի կը «պարտի Հիլօնէի: Թէ՛ ԱՅՍ ԵՒ Թէ՛ «ՄԻՒՍ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԿՐԱՆՔ ԳԱՆՁԵԼ... «Եւ ձեր իրաւունքը պաշտպանեալ լսուի «կուսամ, երբ փոխանորդութիւն մը զեր- «կեք. եւլին. եւլին:»

Կը տեսնուի թէ վատարանը այս նա- մակը գրած է ժառանգորդներուն՝ ուղ- ղակի պարտատէր Գարալտիլիին: Գրու- ուելով, և վախճան հազար ռուպլի պարտքը 40,000 ցուցնելով ուղղած է ծա- ռայութիւն մը մատուցանել Գարալտիլիի: Իսկ ժառանգորդներուն կը խոստանայ կտակին վաւերացումէն առաջ գանձել ոչ միայն այս 40,000 ռուպլին, այլ և միւս պահանջները:

Մենք թէ և նոյն թուականին Պատրիար- քարանի հետ պաշտօնական համաձայնու- թիւնը գիտ կնքած էինք, հետեւաբար չառ դիւրին էր մեզի համար այդ գումարները գանձել, բայց չուզեցինք ս' և է կարգա- դրութիւն ընել առանց Պատրիարքարանի: Այդ թուականէն յետոյ Գարալտիլի ան- ձամբ Պոլիս եկաւ, բայց ես ժառանգորդ- ներուն արգելեցի անոր հետ յարաբերու- թեան մասնել:

Յետոյ 11/24 ապրիլ թուակիր Ազգ. Վարչութեան ուղղուած խնդրագրով մը 50ի իջեցուցինք ժառանգորդներուն պա- հանջած բաժինը: Յ՛) ապրիլ թուակիր ռուբլ խնդրագրով մը տեղեկացուցինք թէ Վար- չութեան կողմէ եղած բերանացի խոս- տումի մը վրայ՝ գաղտնի ենք ու է ձեռնարկ և միջամտութիւն ընելէ մեր ժառանգական իրաւանց պաշտպանութեան համար, խնդրելով անմիջապէս որոշել ժա- ռանգորդներու ստանալիք բաժինը: 23 յուլիս 907 թուակիր խնդրագրով ալ ՎԵՐՁՆԱԿԱՆԱՊԷՍ որոշ բաժին մը յատկաց- ուիլը պահանջեր էինք: Ասոր վրայ էր որ վարչութեան կողմէ կարգուած իրաւա- գէտներու յանձնաժողովը խնդիրը նորէն իր ամէն մանրամասնութիւններով քննել և ուսումնասիրելէ ու ժառանգորդներուն հետ բանակցելէ յետոյ, խնդիրը հաշտու- թեամբ վերջացնելու համար 25 բաժինը միայն ընդունելիս առաջարկեց և այս ա-

առջարկը թէ Ազգ. Կեդրոնական Վար- չութեան և թէ ժառանգորդներուն կողմէ ընդունուելով, վերջապէս 30 նոյեմբեր 1907 թուակիր պայմանագրութիւնը ԵՐ- ԿՈՒՍՏԵՔ ԿՆՔՈՒԵՑԱԻ, որով հանգուց- եալին հարստութենէն դատական, թաղ- ման, տպագրական և այլ բոլոր ծախքերը զեղչելէ ետք՝ մնացած գումարին 25ը ժառանգորդներուն արուելու պայմանաւ արգելքները վերցուելու և գործին ըն- թացքին դիւրութիւն արուելու համար դանազան պաշտօնատուններու ուղղեալ 4 ԿՏՈՐ ԻՊՐԱՆԱՄԷՆԵՐ ԺԱՌԱՆԳՈՐԴ- ՆԵՐՈՒՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՊԱՏՐԻ- ԱՐՔԱՐԱՆ ՏՐՈՒԵՑԱԻ, և խնդիրը վեր- ջացաւ ճիշդ 9 ամիս ձգձգուելէ վերջը:

Երբ պատկաւելի ժողովը նկատի առնէ թէ 1. ժառանգորդները Գարալտիլիի առաջարկը մերժած էին, 2. Գատարանի առջև կտակին վաւերացուելուն դէմ ար- գելք էին յարուցած, հակառակ ուսս փաստաբաններու կրկնակի դիմումներուն: Յ. Թէ արուելիք 25ը բոլոր ծախքերէ գուր է, որ իրականութեան մէջ 20 միայն ըսել է, այս ալ խնդրանք դատական եղանակով կարգադրուելու պարագային փաստաբանի վարձքի և դատական ծախ- քերու հաւատարող գումար մ'է գրեթէ, և եթէ դատը կորսուէր՝ Պատրիարքարանը ստնիթ մ'իսկ չ'առնելէ զատ, բաւական ալ ծախքերու ենթարկուած պիտի ըլլար, և վերջապէս. թէ ժառանգորդները իրենց պահանջքը կը հիմնաւորէին հանգուցեալին վերջին կամքը արտայայտող և անոր գաղտնայից մահէն քանի մը օր ստաջ գրուած 5 Փետրուար 607 թուակիր նամա- կին վրայ, որ ի մէջ այլոց հանգուցեալը կ'ըսէ՝ Տիկին Մարին Էնֆիլէճեանի ուղ- ղելով:

«Հիմա բոլոր յոյսս բաւ վրադ է. ամեն «ժամանակ բաւ վրադ կը մտածեմ, ինչպէս «նաեւ աղիւսներուն. ինչ հարստութիւն «ունիս քանի տուն, չեմ գիտեր, եւ տա- «րեկա՛ ինչ եկամուտ, գրե՛ ինձի: Ես «առողջութեան եւ սնացումսի տեսակե- «նով գեթ կ'երթամ կոր, ասոր հետ մեկտեղ «ՔԵՁԻ ԶԱՄԱՐ ԱՆ ՊԻՏԻ ԸՆԵՄ ԻՆՉ ՈՐ

«ԿԱՐԵՆԱՄ: Կարելի է ամառը Պոլիս «գամ եեզ տեսնելու. գրե՛ ինձի շուտով «ի՛նչ հարստութիւն ունիս եւ ի՛նչ եկա- «մուտ:»

Վստահ եմ թէ գործին այս պարագա- ները գիտցող և գրաւոր աղագրոյցները տեսնողները Եռանդեքուի կտակալին խնդ- րին մէջ ժառանգորդներուն հետ գոյացած համաձայնութիւնը ոչ թէ քննադատելի, այլ գովելի և արդար պիտի գտնեն:

Իսկ կտակին օրինակը Եռանդեքուի մահէն ալ առաջ քրոջը արուած ըլլալուն դէմ կը յայտարարեմ թէ երբ ժառան- գորդներուն փոխանորդութիւնն ստանձ- նեցի, ուղեցի կտակին պարունակութիւնն հասկնալ. ժառանգորդները Ռուսիոյ մէջ պատահած կտակի մը գոյութեան մասին անորոշ տեղեկութիւն մը միայն ունէին, հետեւաբար անմիջապէս և պաշտօնապէս դիմեցինք մէկ կողմէ Պատրիարքին և միւս կողմէ Ռուսիա՝ կտակին մասին տեղեկու- թիւն ուղեւոր: 17 Փետր. 907 թուակիր Պատրիարքարան արուած խնդրագրին մէջ՝ Տիկին Աննա Եռանդեքու կը գրէ.

«Իմ կողմէս ներկայացուցիլ կարելով «Յակոբ Պանի ԷՖ. Ե կը խնդրեմ որ Ազգ. «Պատրիարքարանի մէջ գտնուած եղբորս «վերաբերեալ ԹՈՒՂԹԵՐՆ ՈՒ ԹՂԹԱԿ- «ՅՈՒԹԻՆԵՐԸ ԻՐԵՆ ՅՈՅՅ ՏՐՈՒԻ:

Ռուսիա գրուած նամակին պատասխանն ալ հետեւեալն է, որ կը կրէ 7/20 մարտ թուականը.

«Ինչպիսի ցօսար Շվանպեղիկն եւ խրկ- «տեցի որ տայ կտակի գօթեան, բայց ի՛նչ «կ'ըսէ քե ԿԱՐԵՆԻ Ե ՍՏԱՆԱՆ ՄԻԱՅՆ «ԱՅՆ ՈՐ ՈՒՆԻ ՁԵՐ ԿՈՂՄԷ ՓՈՆԱՆՈՐ- «ԴՈՒԹԻՆ. բայց առ այժմ այս աւելորդ «է. ես գիտեմ կտակի պարունակութիւնը. «ինքն գրուած եմ մեջք վկայ եւ այդպէս «ըսած եմ փաստաբանին, ՈՐ ԻՐ ՎՐԱՅ «ԿԱՌՆԷ ՁԵՐ ԱՅՍ ԳՈՐԾԸ:»

Պարզ է թէ մարտ 20ին ժառանգորդք չունէին կտակին օրինակը. իսկ բուն տե-

դէն, Ռուսիայէն ստանալու համար ո՛ր և է գիշարութիւն չկար. քանի որ Ռուս դատարանը պատրաստ էր անմիջապէս տալու Տիկնով փոխանորդին: Արդէն ըստ ինքեան անհիմն է կտակը ժառանգորդներէն պահելու գաղափարը: Կտակը չցուցնելով ի նչպէս կը պահանջուի որ ժառանգորդները ժառանգութեան ձեռք չի գործեն: Իմ գիմուսի վրայ Ս. Պատրիարքը բերանացի տեղեկութիւն մը տուած էր կտակին վրայ. յետոյ, գործին ընթացքին, ամբողջ տօսիէն տրամադրութեան տակ դրուեցաւ. քննադատական տեղեկագիր մ'ալ տուած եմ այդ առթիւ, որ Պատրիարքարանի տօսիէին մէջ է և սապէս կըսկսի.

«Ձեր Սրբազնութեան կողմէ տրուած «հր մանին համեմատ» Պ. Անտրոնիկ եուս-«հուի ժառանգութեան վերաբերեալ տօսիէն «ուսումնասիրեցի, եւլն եւլն:»

Այս առթիւ հարկ կը տեսնեմ Պատկ ժողովիդ ուշադրութիւնը հրաւիրել թերթերու ոմանց այն անորակիկ գրադարութիւններուն վրայ, որով, քանի մը թերթ աւելի ծախելու համար, համարձակեցան հրապարակով յայտարարել թէ Համիտի պալատէն հրամաններ բերել տալով է որ յաջողած ենք կնքել տալ 1/25-ի համաձայնութիւնը: Չուզեցին տրամաբանել իսկ թէ եթէ ժառանգորդները պալատի ազդեցութեամբ կամ կաշառքով ընել տուած ըլլային այդ կարգադրութիւնը նախկին Պատրիարքին և Վարչութեան, ինչ հարկ կար ինդիրը 9 ամիս ձգձգելու, իրաւագէտներէ յանձնաժողով կազմելու, և 1/25-ով հաշուութիւն կնքելու: Եթէ ապօրէն միջոցով մը հաշուութիւն կնքուած ըլլար, ինչո՞ւ այդ 1/25-ը անմիջապէս չի գանձուէր: Թուականներով բացայայտ է թէ այս պայմանագրութիւնը կնքուելէ ետքը գրեթէ տարի մը նախկին Պատրիարքը և Վարչութիւնը աթոռի վրայ էին և ժառանգութեան կարևոր գումար մը Պոլիս փոխադրուած և Գարակէօղեաններու քով ի պահ գրուած էր: Այս պարագան չի՞ բաւեր աղացուցանելու թէ ժառանգորդները և է նենդ մատուցէ հետու, վստահ էին

իրենց իրաւունքին վրայ, և պատճառէին տեսներ աճապարանքով գանձելու զայն: Գրեցին նաև թէ Պահրին ինքզինքը Քաղ. ժողովի անդամ ընտրել տուած է՝ ի նպատակ եուանէսքուի խնդրին գործել կարենալու համար. այս պարագան ինձմէ աւելի պատկ. ժողովիդ համար անարգանք է: Այդ հրաշալի գաղափարն յղացող և հրատարակող անձն է որ 24 մարտ 907 թուակիր նամակին մէջ ըսած է:

«Երե եուանեպուի բոլրն ու բոլր ալ. «Չիկը ինծի հետ ըլլան, Պատրիարք չի կերնար 5 փարա իսկ իւրացնել. այս լանը լաւ պէտք է գիտնալ. ԻՍԿ ՄԵՆՔ, ԱՅ՝ ՍԻՆՔՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ ԵՒ ԵՍ, ԿԸՐ՝ ՆԱՆՔ ՀԱՄԱՋԱՅՆԻԼ ՄԵՋԵՐՆԻՍ, ԵՐԲ «ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՁԵՌՔԷՆ ԱՋԱՏԷՆՔ ԲԱ՝ «ՌԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՅՈՒՄԸ 158,000 «ՊԱՆՔԸ... Երե հանգուցեալը մի բանի «որ ալ ապրէր՝ մտադիր եր ՓՈՒՆԷԼ ԲՈՂՈ՝ «ԲՈՂԻՆ ԻՐ ԿՏԱԿԸ:» Աւելորդ է ըսել թէ այս առաջարկն չէր ընդունուած ժառանգորդներուն կողմէ:

Վարչութեան անդամակցութեան հրաւիրուելէս վերջը, եուանէսքուի գործը տեղանին վրայ եկած ատեն յարգելի ընկերներս երբ միմիայն ինծի կ'ուզէին յանձնել այս խնդրին ուսումնասիրութիւնը, եուանէսքուի ժառանգորդներուն փոխանորդը ըլլալու առարկելով՝ առանձինն չընդունցի: Այս գործին վերաբերեալ խընդիրներու մէջ իբր վարչութեան անդամ ձայն և քուէ չունենալս յայտարարեցի, վերջապէս՝ Տիկին Էնֆիլէճեանի արուած 100 ոսկիին արուելը որոշուած և յանձնուած օրերը՝ Եփեսոսի Կոլային խնդրին տօսիւ հրաժարած էի վարչութեանէ:

Այս մանրամասնութիւնները կը հաստատեն նախորդ Վարչութեան յարգելի անդամները, ինչպէս նաև նախորդ Պատրիարք Ամենապատիւ Գուրեան Սրբազան, հրաժարական մերժուելու առթիւ գրուած պաշտօնագրին մէջ իսկ, հետեւեալ կերպով.

«Բարեկեանակ եուանեպուի կսակիգու-«մարեն անոր բոլր աղջկան Տիկին Մարի Էն

«Ֆիլիքեոնի տրուած 100 ոսկին իբր նպատակ «սահմանուած է... Եւ քե մանաւանդ «ԱՅՍ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՁԵՐ ՄԱՍՆԱԿ-«ՅԱՍՑ ՁԵՐ ԱՋՆՈՒՈՒԹԻՆԸ այն առիւն. «Երբ բացակայ գտնուելով ժողովոյ նիստ-«սեռէն:» Այս բացատրութիւնները կը բաւեն կարծեմ համոզելու պատկ. ժողովդ ինչպէս նաև հանրութիւնը, թէ եուանէսքուի ժառանգութեան իր ժառանգորդներուն բաժին մը հանելու խնդրին մէջ ո՛չ մէկ զեղծում գործուած է:

25 տարուան փորձառութեամբս գիտեմ թէ՝ երբ այս տեսակ խնդիրները երկու անհամեմատ մէջ հաշուութեամբ կարգադրուին, երկու կողմն ալ գոհութեամբ կ'ընդունին և ցմիշտ չնորակալ կը մնան: Դժբախտաբար Ազգ. գործերու մէջ պայմանները տարբեր են. խնդիրը կարգադրող վարչութիւնը երբ փոխուի, յաջորդներն խնդրին գիշարութիւններուն մօտէն տեղեկ չըլլալով, կամ զանազան նկատումներ ունեցող տարբեր անձեր, ազգասիրական գործ մը ըրած ըլլալ կը կարծեն տուանց այլևս այլի քննադատելով:

Հետեւաբար կը խնդրեմ պատկառելի ժողովէդ որ Ազգ. Վարչութեան հարկ եղած հրահանգը տայ, միանգամ ընդ միշտ վերջացնելու համար այս խնդիրը Պատրիարքարանի յանձնառութեան համեմատ 907-ի ու արդարութեան սահմանին մէջ:

#### Բ.— Կ. ՊԱՍՄԱՃԵԱՆԻ ԽՆԴԻՐ

Այս՝ հանգուցեալին պատրաստած բառարանին խնդրին է:

Այս խնդիրը նախապէս յուզուեցաւ նախկին վարչութեան ժամանակ: Օրմանեան Սրբազան այս երկասիրութեան բոլորովին անարժէք ըլլալը յայտնելով, անոր տպագրութեան սանթիմ մը իսկ յատկացնել չուզելով կը նկատէր. իսկ ժառանգորդները միմիայն հանգուցեալին կամքը յարգած ըլլալու համար չափաւոր ծախքով մը, այսինքն 50—100 ոսկիով անոր տպագրութիւնը խնդրած են: Այս մասին յիշատակութիւն մ'ալ կայ ժառանգորդներու և

Պատրիարքարանի մէջ կնքուած պայմանագրութեան մէջ, որ կ'ըսէ. «Յետ խոր-«հրդակցութեան, որոշուեցաւ Պ. Անդրեանիկ եուանէսքուի թողած ստացուածքին «տուրքերը, նոսարական և փաստարանա-«կան ծախքերը, յուղարկուորութեան, «գերեզմանի և չիրմի համար վճարուած «և վճարուելիք գումարները և ՀԱՆԳՈՒՅ-«ԵԱԼԻՆ ԹՈՂԱՍՑ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆԻՆ «ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՆԻՔ «ՏՊԱԳՐԱԿԱՆ և այլ բոլոր ծախքերը զեղ-«ջուելէ ետքը մնացած գումարին 1/25-ը «Պատրիարքարանի կողմէ վճարուի իրեն «(այսինքն ժառանգորդին):»

Ահա այս կերպով այս երկասիրութեան խնդիրը նախապէս կազադրուած էր յիշեալ պայմանագրութեամբ. բայց սահմանագրութեան հետ Պ. Կարապետ Պատմաճեան Պոլիս գալով, «իւ աղբասու-«տութիւնը, մաւած կօշիկները Գարեան վարչութեան ցուցնելով, պօռալով կանչելով» յաջողած է գործին տարբեր գոյն մը տալ: Գարեան վարչութիւնը եթէ ժառանգորդներուն հետ խորհրդակցէր կամ գոնէ տօսիէին մէջ դառնուած պայմանագրութիւնը ուսումնասիրէր, պիտի համոզուէր թէ հանգուցեալին թողած ձեռագիր բառարանին տպագրութեան 50—100 ոսկիէն աւելի բան մը տալ ներկի չէր, և պատրիարքարանին նախապէս կնքուած համաձայնութեան հակառակ էր: Աւելի տալով ոչ միայն պատրիարքարանը և որբերը պիտի տուէին, այլ և ժառանգորդներն ալ, վաճառքի անոր յատկացուելիք գրամին մէկ չորրորդը ժառանգորդներուն դրամին պիտի տրուի, հետեւաբար անոնց ալ հաճութիւնը չառած այդպիսի կարգադրութիւն մը և ծախսեր ընել ապօրէն է:

Գարեան վարչութիւնը ոչ միայն չէ ուսումնասիրած ժառանգորդներուն պայմանագրութիւնը, այլ նոյն իսկ նկատի չէր առած իրմէ բոլորած անտեսական խորհուրդին և ալ պաշտօնական մարմիններու այդ մասին ըրած կարգադրութիւնները, որոնք գոնէ 500—1500 ոսկիով Պատմաճեանի այս գործը յանձն առնելը վարչութեան կը տեղեկագրէին:

Գարահան վարչութիւնը չէր ուսումնասիրած նոյն իսկ հանգուցելոյն վաւերացեալ բաւական կտակագիրն, որուն մէջ ո՛չ Պատմաճեանի մասին և ո՛չ ալ յիշեալ երկատիրութեան տպագրութեան մասին բառ մը իսկ չկայ, և ամբողջ ունեցածը Ազգին որբերուն յատկացուցած է: Իսկ Կարապետ Պատմաճեանի յենած թուղթը վաւերացուած կտակագիրը չէ, այլ պարզ նամակ մը որուն իր կողմէ եղծուած ըլլալուն ապացոյցներ կան:

Հետեւաբար, կ'առաջարկեմ Գարահան վարչութեան կողմէ այդ մասին եղած կարգադրութիւնը չեղեալ նկատելով, 1907 նոյեմբեր 30 թուակիր պայմանագրութեան համեմատ հանգուցեային քողած ձեռագիրը հրատարակել փոքր ծախքով մը միայն:

Գ. — ԿՏԱԿԻՆ

ԻՐ ՆՊԱՏԱԿԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԽՆԴԻՐ

Այդ մասին ստիպուած եմ քննադատել և հարցադրել ներկայ Վարչութիւնը որ կտակագիրն բացորոշ տրամադրութեան հակառակ կարգադրութիւններ ըրած է: Կտակեալ դրամը, ըստ վաւերացեալ կտակի,

Ֆիթայն որբերու յատկացուած է, բայց ներկայ վարչութիւնը այդ դրամէն Կ. Պոլսոյ մէջ գտնուող և որբ չեղող գաւառացի ուսանողներու ալ ամսական տալ որոշած ըլլալը՝ թերթերու մէջ կարդացի: Հետեւաբար այդ տպօրէն կարգադրութեան դէմ կը բողոքեմ:

Կարօտ ուսանողներու օգնել նուիրական պարտականութիւն մ'է, որ ամէն անհատի վրայ կը ծանրանայ, բայց ասոր համար երբեք ներկի չէ որբերու յատկացուած կտակեալ գումար մը իր նպատակէն չեղեցնել: Կտակողին կամքը աւելի ևս նուիրական պէտք է ըլլայ. եթէ կտակեալ դրամը կտակողի նպատակէն դուրս բաներու ծախսէ վարչութիւնը, ոչ միայն զեղծում մը գործած կ'ըլլայ, այլ ասիէ յետոյ կտակողները իրենց դրամին բուն նպատակին չգործածուելուն և ըստ հաճոյս ծախսուելուն վրայ կասկածելով այլ ևս կտակ ընելէ կը դադրին. ահա ասոր առաջքը առնելու համար ներկայ վարչութեան այս սխալ որոշումը չեղեալ նկատելով Պ. Անդրանիկ Եռանկեալի կտակեալ դրամին տոկոսը Դայն որբ ուսանողներուն յատկացուիլը և որբ չեղող ուսանողներուն օգնելու համար Ազգ. Վարչութեան կողմէ տարբեր միջոցներ ձեռք առնուիլը յանձնարարելից կը խնդրեմ:

ՅԱԿՈԲ ՊԱՆՈՒՆ



